

ՊԱՏՄԱԳԻՏՈՎԱՆ

Ա.ՍՈՐԻՔԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ.

(Կեմքրիջի համալսարանի ուսուցչապետ Փ. Կ. Բեօրկիտոսի*.

Դասախոսութիւն Բ.

Ա. Գիրքն Ասորերէց**.

Պետքառական Ասորիքի Պետքառայի եւ արամեական լեզուն:—Ա. Ա-
ֆինքը ուղես յունական բազմութեան մեջ ասորական բարգ-
մանութիւնները:—Մաքրութան եւ նոր Կտակարանը:—Ասորական
ննագոյն գրականութեան մեջ ս. Գրքի բաղուածներ:—Ս. Եփեմի
գրում բազուածներ:—Մաքրութան եւ Գիտեսասարանը:—Եւանգելիոն
դա-մբաթար' է:—Ասորական Գիտեսասարանի բուականը:—Հին կր-
տակարանի Պետքառական:—Եզրակացութիւն:

Քրիստոնէական հոգութիւնները ուսումնասիրելու համար Ս.
Գրքի ասորերէն զանազան թարգմանութիւնները մեծ ուշադրու-
թեան արժանի են: Ասորական աւելի հնագոյն թարգմանութիւն-
ները շատ զնահատելի են որպէս քննական «Հեղինակաւորութիւն-
ներ», որպէս գոկումենտներ, որոնց օգնութեամբ այժմեան գիտ-
նականները կարող են հետազոտել Հին և Նոր Կտակարանների
ընազրերը, եթէ նրանք ճիշտ չեն թարգմանուած, կամ պաշտ-
պանել եթէ երկին որ անաղարտ են: Ասորոց, մանաւանդ չորս
Աւետարանների, թարգմանութիւնը է մէկը մեր ամենալաւ հե-
ղինակաւորութիւններից: Բայց Ս. Գրքի զանազան տեսակ ա-
սորերէն թարգմանութիւնները ինքն ըստ ինքեան հետաքրքիր են,
մի կողմ թողնելով նրանց քննական արժանիքը: Նրանք հանդի-
սանում են ասորոց եկեղեցու պատմութեան ու զարգացման
որպէս մեկնութիւն եկեղեցու պատմութիւնը օգնում է մեզ հաս-

*) Խրիստոնէական պատմութիւն 1914 թ. Մայ 676—684.

**) Ինկատի ունենալով որ մեր ս. Գիրքը առաջին անգամ Թարգ-
մանուել է, ըստ պատմութեան, ասորերէնից եւ ապա սրբագրուել յունա-
րէն բնագրով, Ասորոց ս. Գրքի Թարգմանութեան հանգամանքը մեր համար
աւելի շահեկանութիւն է ստանում:

Հայ բարգ.

կանալու և գնահատելու ս. Գրքի թարգմանութիւնների յատկութիւնը, միւս կողմից այնտեղ, ուր պատմական անմիջական տեղեկութիւնները նուազ են, ո. Գրքի թարգմանութիւնների յատկութիւնները որոշ աստիճան հնարաւորութիւն են տալիս պատմութիւնը լուսաբանելու:

Նոյնը թոռոցիկ կերպով կարելի է ասել անգլիական եկեղեցական պատմութեան վերաբերութեամբ: Անգլիական ս. Գրքի պատմութիւնից քաղած տեղեկութիւնները շատ լաւ լուսաբանում են անգլիական բնֆորմացիայի ընթացքը: Ի դէմս Տինդալի ունենք բողոքական այնպիսի բնֆորմատոր, որ առաջինը տուեց մայրենի լեզուով ս. Գրքի թարգմանութիւնը իսկական լեզուներից, Նրա երկասիրութեան մէջ տեսնում ենք արձագանքը այն ժամանակի վէճերի, երբ «Եկեղեցու» տեղ՝ «Կոնցը եպացիա» և քահանայի տեղ՝ «Երէցներ» ենք գտնում: Զանազան, աւելի կամ պակաս, պաշտօնական թարգմանութիւններ, որ ստացել են իրանց կատարելութիւնը 1611 թուի նուիրագործամամբ, ցոյց են տալիս Անգլիայի բնֆորմացիայի սկզբունքների յաջողութիւնը: Տինդալի բողոքական անհամապատասխան թարգմանութիւնը արուեց իշխանութեան կարգադրութեամբ, բայց չնայելով սրան՝ զործադրուեմ էր այն որպէս հիմք ս. Գրքի ապագայ թարգմանութիւնների համար, ուր եկեղեցական աւանդական յորչորջումն փոքր իշտէ վերականգնած է:

Հարկ չկայ նման մանրամասնութիւններ մէջ բերել: Ես միայն կամենում եմ ցոյց տալ ձեզ, որ ասորոց հին եկեղեցու պատմութիւնը ուսումնասիրելիս՝ գտնում ենք համարեան նոյն պայմաններում, ինչ պայմաններում ենք գտնում երբ կամենում ենք Անգլիայի բնֆորմացիայի ընթացքը պատկերացնել անգլիական ս. Գրքի և Ֆօքսի Նահատակների Գրքից առած սակաւթիւ զրոյցների համեմատ: Բայց արժէք ունեցող հետևանքի համակար պարտաւոր ենք լինել համարձակ (բայց և) շրջահայեց:

Այն տեղը, որ անգլիերէն խօսող քրիստոնեանների միջն բոնում է «Նուիրագործուած թարգմանութիւնը», ասորերէն խօսող քրիստոնեանների մէջ բոնում է Պեշիտան: Այն՝ ինչ որ յայտնի է միզ Պեշիտայի անուան տակ, է կանոնական ս. Գրքի Հին և Նոր Կտակարանների ասորերէն թարգմանութիւնը, որ ընդունել է ասորոց եկեղեցին: Պեշիտան մինոյն ժամանակ նեստորականների, յակոբիկների, մելքիտների ու մարոնիտների ս. Գրքն է: Նրա այս զրութիւնը ապացուցանում է, որ այն 5-րդ դարի երկրորդ կէսից առաջ է. այն ժամանակի զործ, երբ ասորոց եկեղեցին սկսում է պառակտուել զանազան, միմիանց հակառակ, մասերի, Պեշիտակոչումը շատ հին չէ: Քինուն նշանակում է «հասարակ»: և ասորի բոլոր համայնքներից ընդունուած թարգմանու-

թեանը վերադրությ 7 և 9-րդ դարերի միջն շրջանում, վերաքննուած թարգմանութիւնից ջոկելու համար:

Այս թարգմանութիւնը կատարել է միաբնակ զիտնական թումա Խարկելացին (Հերակլացին) և Պողոս Տելլացին: Այս վերաբնուած թարգմանութիւնը գրուել է կիսայունարէն փրուն աղջատաբանութեամբ և խճողուած է բնագրի մէջ ներմուծուած քննական բարդ կէտերով: Այդպիսի գիտական երկի հետ համեմատած՝ առորիների հին թարգմանութիւնը ռհասարակ» երևեց, Բայց Պեշիտայոր ջորջումը ասորական վուլգատայի համար այնքան յարմար է, և որոշ բանաձեռ որ լաւ կանենք, եթէ մենք էլ գործ ածենք այն:

Առաջին բանը, որ պէտք է ասեմ ձեզ Պեշիտայի մասին, այդ նրա բնագրի որոշ լինելն է: Այժմ եղած ձեռագիր մատեանների մէջ գտնուած շեղումները աննշան են: Դրանք աւելի սակաւաթիւնն լատինական վուլգատայի ձեռագրերի վոփոխակներից՝ դրանք մեծ մասամբ ամենամնկարենոր վրիպակներ են, ուղղագրութեան սխալներ են: Այս հանդամանքը շատ արժանի է ուշադրութեան և նրանով, որ Պեշիտայի ձեռագրերը հասնում են մինչև 5-րդ դարը: Ամբողջ Ս. Գիրքը, այսինքն, չին և նորկտակարանը՝ պարականուններով կայ ասորերէն ձեռագրերում 6-րդ դարից, այդ մի փասոս է, որի համապատասխանը չկայ ոչ մի լիզում բացի յունարէնից, իսկ այդ ժամանակի յունարէն ձեռագրերը զարմանալի շեղումներ ունեն յետնագոյն բնագրերից:

Միաժամանակ մի քանի հետաքրքր խնդիրներ էլ են նկատուած: Պեշիտան եկեղեցական նուիրականութիւն էլ է: Ի՞նչ նշանակութիւն ունի այդ նուիրականութիւնը: Ի՞նչ է ասում նա եկեղեցու և, Գրքի մասին: Ո՞ր գրքերը կանոնական էին համարում հին ասորիները: Եւ ի՞նչ գրութեան մէջ է գտնում բնագիրը այն ձեռագրերում, որոնցից կատարուել է թարգմանութիւնը:

1555 թ, երբ առաջին անգամ հրատարակուեց Նոր Կտակարանը Պեշիտայի թարգմանութեամբ, հրատարակիչ կանցլեր Յ. Ա. Վիդմանշատղը յայտնեց, որ Պեշիտայի ասորերէնը Պաղեսախնի լեզուն է, մեր Տէր Յիառուի և նրա առաքեալների մայրենի լեզուն: Այդ ժիշտ չէ. Պեշիտայի ասորերէնը նման է Պաղեսախնի արամէականին, բայց բնաւ նոյնը չէ: Ասորերէն է կոչւում արամէական լեզուի մի բարբառը, որով խօսում են Եփրատի հովտի և նրա մերձ գաւառների բնակիչները: Պաղեսախնում, հարեւան երկրներում և հիւսիսում մինչև Պալմիրա երթեմն խօսւող բարբառներն էլ արամէական լեզուի բարբառներ էին, բայց տարբեր ասորերէնից: Արևմտեան այս արամէական բարբառները ասորերէնից տարբերուում են այն ամենով, որ կարելի է կոչել մասնիկ, բայց երի

խոնարհում, անունների հոլովում և բառարանում «Պաղեստինի առամձական լեզուն» յայտնի է մեզ Հին Կտակարանի արամէական մասերից, տարգումներից և հրէական այլ գրականութիւնից, սամարացիների ժամերգութիւնից ու տարգումից, նարատական ու պալմիրական արձանագրութիւններից, բայց դրանք Պեշիտայի լեզուն չեն:

Անհրաժեշտ է պնդել այս, որովհետեւ վաղուց տարածուած սխալ հայեացքը Ասորիքի և Պաղեստինի քրիստոնեաների միջև կապի մասին դեռ այժմ էլ բոլորովին չէ անհետացել: Օրինակ, Նոր Կտակարանի կանոնական գրքերի մասին հանգուցեալ դոկտոր Վեստկոտտի յայտնի գրքում բոլորովին սխալ կերպով է խօսուած Պեշիտայի մասին: Արդարև, այս երկը առաջին անգամ հրատարակուած է 1855 թ. բայց նրա Դ-րդ հրատարակութեան մէջ, որ դուրս եկաւ 1896 թ. դեռ էլի կարգում ենք. «Պեշիտայի բարբառը, ինչպէս որ այժմ յայտնի է, գոնէ մասամբ, է արամէական լեզուի այն ձեզ, որ տարածուած էր Պաղեստինում¹⁾», և «Պեշիտայն ընդհանրական քրիստոնէութեան հնագոյն յիշատակարանն է²⁾: Յիրաւի դոկտոր Վեստկոտտը ընդունում է, որ Պեշիտայի Նոր Կտակարանը ենթարկուել է «խիստ վերաքննութեան Դ-րդ դարում³⁾, Բայց նա պնդում է, որ Պեշիտայն Պաղեստական ծագումը ունի և հաստատում է, որ Պեշիտայի այժմեան կանոնը հնագոյն ժամանակի դործ է: Ոչ այս և ոչ միւսը այս պընդումներից՝ չեն կարող դիմանալ այն վկայութիւնների լոյսին, որ այժմ ձեռքի տակ ունենք»:

Նախքան շարունակելը մի անգամ էլ յիշեցնում եմ, որ Ասորիքում Անտիոքը ասորական քաղաք չէր, այլ յունական կուլտուրայի: Երբ որ քրիստոնէութիւնը Հռովմէական կայսերութեան պետական կրօն դարձաւ, Անտիոքի շրջանում կամ նրա պարսպի շուրջը երեսցին ասորերէն խօսող միաբանութիւնների վանքեր, բայց ըստ էութեան՝ այն յունական քաղաք էր Հռովմէական կայսերութեան մէջ ասորական գուառի և հեռաւոր երկրների իրերի գրութիւնը յիշեցնում է մեզ այն՝ ինչ որ Հարաւային Ափրիկայումն էր: Ինչպէս Հարաւային Ափրիկայում մեծ քաղաքների բնակիչները գլխաւորապէս անգլիացիք են, իսկ գիւղերինը, համարեա բոլորը, հոլանդացիք թէ լեզուով և թէ քաղաքակրթութեամբ, արևմտեան Ասիայում էլ միայն մեծ քաղաքներն էին յունական, իսկ գիւղերի

1) A general Survey of the Canon of the New Testament. London 1896 P. 241.

2) Ibid. P. 250.

3) Ibid. P. 242.

բնակիչները արամէական խօսող ցեղերից էին: Եղեսիայում քրիստոնէութեան երևելը այն նշանակութիւնն ունէր, որ այն ասորական քաղաք էր: Մինչև այդ ժամանակ ասորերէն խօսող քրիստոնէութիւնն զեռ չէր հաստատուել Եղեսայում: Եկեղեցու ագդեցութիւնը Ասորիքում՝ Միջերկրականի ծովափնեայ յունական քաղաքներից դեռ հեռու չէր տարածուել:

Դառնանը ասորերէն Աստուածաշնչի պատմութեանը: Ես ձեր ուշագրութիւնը միշտ հրաւիրել եմ այն զլիաւոր փաստի վերայ, որ Պեշիտայի կողեցսի հնագոյն բազմաթիւ ձեռագրերը մի ևնոյն բնագրից են: Մ-տը Գլիլեամը մօտ ժամանակներս հրատարակեց Աւետարանը Պեշիտայի թարգմանութեամբ: Նա ժողովել է մօտ 40 ձեռագրեր, որոնց մի մասը ծ-րդ դարի երկրորդ կէսից էր, և չնայելով սրան, ձեռագրերի միմեանցից տարբերութիւնը միայն ուղղագրական էր: Հետևաբար եկեղեցու նուիրագործած բնագիրը մեծ հոգածութեամբ է պահուել հնումն: Բայց այդ սկզբնական բնագլըն է. հարցնում ենք:

Այս հարցն անելը անհրաժեշտ է. որովհետև ասորերէն ս. Գրքի թարգմանութիւնները միայն Պեշիտայի գեղեցիկ ձեռագրերով չեն սահմանափակւում: 1858 թ. գոկտոր Կըիւրտոնը, որ այն ժամանակ Բրիտանական թանգարանի արևելեան ձեռագրերի գրապահն էր, հրատարակեց ասորերէն աւետարանի ուրիշ թարգմանութեան հատուածները մի ձեռագրից, որ գոնէ նոյնպէս հին է որպէս Պեշիտայի ձեռագրերը: Այդ թարգմանութիւնը երկար ժամանակ յայտնի էր իւր գտնող ու հրատարակող «Կըիւրտոնի ասորերէն թարգմանութիւն» անունով: Այն անշուշտ Պեշիտային նման է, թէև մի քանի կարեոր մանրամասնութիւնների մէջ տարբերում է: Հարց է ծագում. երկու թարգմանութիւններից հըն է ասորական սկզբնական թարգմանութիւնը Կըիւրտոնի ձեռագիրը շատ թերի էր, բայց 1893 թ. գտան Սինա լեռան սր. Եկատարինէի վանքում նոյն ասորերէն լեզուով ուրիշ ձեռագիրը Այս վերջինս—կըկնագիր է (պալիմպսիս), և աւելի կամ սակաւ սրբուած է, և նոյնիսկ թղթի վերայ ուրիշ գիրը գրուած, բայց սկզբնագիրը մեծ մասամբ կարելի է չոկել Ասորական այս պալիմպսիսուը շատ հին ծագումն ունի. այն աւելի հին է նոյն իսկ Կըիւրտոնի ձեռագրից և շատ տարբերում է նրանից լեզուով և յունական բնագրի ընթերցումներով, յունական բնագրի, որ թարգմանութեան հիմք է ծառայել Բայց երկու ձեռագրերը ընդդէմ Պեշիտայի յաճախ զարմանալի կերպով նման են: Երկու ձեռագրերը իրանց կոչում են Եւանգելիոն դա-Մէֆարքէ. մի անուն, որի նշանակութիւնը յիտոյ նկատ կառնուի: Վերջին 50 տարիների ընթացքում շարունակուած էր բանա-

կոփեր Կը իւրտոնի Աւետարանի և Պեղմտայի իրաւունքների մասին: Այն ժամանակում մի կարդ ապացոյցներով պարզ որոշուեց, որ ոչ մէկը և ոչ միւսը չէր այն, որով Աւետարանը հին ժամանակ կարդացում է ասորերէն խօսող քրիստոնեաների մէջ: Մինչեւ Երարքը բուն ասորերէն երկերում, բացի թարգմանականներից, առանձին աւետարանները բնաւ չեն յիշում: և քաղուածների բնագիրը սովորաբար կազմուած է զանազան աւետարաններից առնուած նախադասութիւններից: Արա պատճառն այն է, որ ասորական հին եկեղեցին ոչ թէ մեր չորս Աւետարաններն էր կիրարկում, այլ Տատիանի Դիատեսարունը: Այս Դիատեսարունը մեր չորս Աւետարանների համախմբումն է, որ մի պատմութիւն էր կազմում Մատթէոս, Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս աւետարաննիշների խօսքերը համախմբելով: Դժբախտաբար այն եկեղեցական գրաքննութեան ենթարկուեց, և մեզ ոչ մի ձեսագիր չէ հասել: որ բովանդակէր Դիատեսարունը իւր սկզբնական ձեռվ:

Մինչև այսօր ասորերէն ոչ մի ձեռագիր չէ գտնուել, որ պաշտօնական Պեղմտայից աւելի հին Գործք Առաքելոց կամ Թղթերի թարգմանութիւնը ունենար: Յիրաւի ցուցմունք կայ, որ եղել է թարգմանութեան հնագոյն ձեւ, բայց այժմ չկայ բնաւ: Ասորերէն նոր-կտակարանի վերաբերմամբ մեր տեղեկութիւնները, գոնէ Աւետարանների մասին, քաղում ենք Ափրահատի քաղուածներից և Պողոս առաքեալի թղթերի մասին՝ ո, Եփրեմի մեկնութիւններից: Այս մեկնութեան միայն հայերէն թարգմանութիւնը կայ:

Անկասկած կը գայ ժամանակ, երբ կարող կը լինենք ասորի Աստուածաշնչի պատմութիւնը գրել շարայարեալ ձեռվ և ժամանակաբական կարգով: Բայց առ այժմ մեր տեղեկութիւնները շատ թերի են և մենք հարկադրուած ենք սկսել մի որոշ կէտից, ուր մենք ունենք պարզ և արժանահաւատ վկայութիւն բնագրերի վերաբերութեամբ, որ գործադրում էր ասորական եկեղեցում: Կարծում եմ կասկած չի լինի այն կէտի վերաբերութեամբ, որ մենք ելակէտ ենք ընդունում:

Պեղմտայի մեր հնագոյն ձեռագրերը համառում են համարեամինչև Ե. դարի կէսը, Կենսագրութեան հնագոյն պատկերը, որ ունինք այդ ժամանակից, այդ Մարքուլայինն է:

Հստ այսմ. անհրաժեշտ է սկսել Ռաբբուլայի եպիսկոպոսութիւնից, որ եղեսիայի եպիսկոպոսն էր 411—435 թ.: Խակոյն էլ կը տեսնենք, որ այդ շրջանը յատկապէս պէտք է նկատել ասորոց Աստուածաշնչի պատմութեան համար որպէս ճգնաժամի շրջան: Այլ հանգամանքներում էլ՝ այն եղերային կէտ է, Այդ վերջին վայրկեանն է, երբ եկեղեցին արևելքում մի էր, թէկ անուանապէս: Սրբանուականները և աւելի հին հերետիկոսները յաղթահարուած

էին, Նեստորը դեռ զատապարտուած չէր։
 Հաստ այսմ 411—435 թ., Ռաբբուլան եպիսկոպոս էր։ Եկեղեց
 ցական այս մեծ գործիչը նորագոյն գիտնականներից չէ զտել այն
 ընդունելութիւնը, որին արժանի է Նա ծնուել է Քիննեշրին (Quin-
 nesrin—Արծուի բոյն) քաղաքում, որ Ասորիքում յայտնի էր Քալ-
 ցիսի (Chalcis) պէս։ Նրա հայրը հեթանոս բուրմ էր, նա մի ան-
 դամ Յուլիանոս ուրացողի Ներկայութեամբ զո՞ն էր մատուցանում,
 բայց նրա մայրը քրիստոնեայ էր։ Քիննեշրինի եւսերիս և Հալէպի
 Ակալիս եպիսկոպոսները Ռաբբուլային դարձրին քրիստոնեայ-
 իւր քրիստոնեայ դասնալուց յետոյ Ռաբբուլան երուսաղէմ գնաց
 և մկրտուեց Յորդանանում, այստեղ, ուր Յիսուս մկրտուել էր
 Յովհաննէս Մկրտչից։ Աւանդութիւնը ասում է, իր ապագայ եւ
 պիսկոպոսը ջրից դուրս եկաւ, ժողովուրդը տեսաւ որ նրա մկրտ-
 ուութեան սպիտակ սաւանը ծածկուեց արիններանդ ճաճանչներով։
 Հայրենիք վերադառնալով Ռաբբուլան իւր ստացուածքը բաժանեց
 աղքատներին, կինը թողից և իւր փոքրանասակ որդիններին ու
 աղջիկներին տեղաւորեց վանական գլուզներում։ Իսկ ինքն մի
 տքնութիւնից միւսին էր անցնում, երբեմն անապատականի պէտ
 ապրելով անապատում, յուսալով թէ իրան կսպանեն արարները։
 Յետոյ իւր բարեկամ եւսերիսի հետ գնաց Բաալբէկ, մեծ մե-
 հեանում աղմուկ բարձրացրեց ¹⁾, որ արժանանար մարտիրոսա-
 կան պսակին։ Բայց մարտիրոսական պսակ չէր վիճակուած Ռաբ-
 բուլային, և երկու խանդավառներին միայն մեհեանի սանդուղ-
 ներից վայր գլորեցին։

Այս սիրազործութիւնները մեզ համար հազիւ թէ նշանա-
 կութիւն ունենան։ բայց զբանը Ռաբբուլայի նշանակութիւնը
 բարձրացրին իւր հայրենակիցների աշխում և շուտով նա Եղեսիայի
 եպիսկոպոս ընտրուեց, և այս տեղը գրաւեց նա 24 տարի մինչև
 իւր մահը 435 թ.։ Անկասկած, նա վերին աստիճանի յաջողակ
 վարիչ էր և կազմակերպող, և եկեղեցական կարգապահութեան վերա-
 բերութեամբ իսխոտ, իսկ վարդապետութեան խնդիրներում հոսան-
 քի համեմատ ընթացող։ Մկրտում Ռաբբուլան կարծես նեստորա-
 կանների կողմն է պահում, բայց շուտով հակուեց հակառակ կու-
 սակցութեան կողմը և դարձաւ բարեկամն ու թղթակիցը Կիւրեղ
 Աղէքսանդրացու, որի հայեացքները պաշտպանում էր 431 թ. Եղե-
 սիայի ժողովում։ Նա մինչև անգամ այրեց Թէզորոս Մոպսուես-
 տացու երկերը և նեստորականներից արժանացաւ «Եղեսիայի»

1) Overbeck, Exploits of Mar Bablula, եր. 496, վերջին տող և
 արծում եմ, այստեղ առաջին անգամն է Բաալբէկ անտոնը յիշուել հմտ-
 Բury's Gibbon, V 431.

բռնաւոր» անունը: Ուրիշ առարկաներ աւելի էին զրաւում Ռաբրուլայի ուշաղրութիւնը քան կրօնական փիլիսոփայութեան խրնդիրները:

Նա մեծահոգի է դէպի աղքատները, բարի՝ դէպի հիւանդները, և անողոր խիստ՝ դէպի իւր անձնական պահեցողութիւնը: Բայց նրա նշանակութիւնն այն է, որ եղաւ եկեղեցական կարգերի մեծ սահմանող: Նա կարգաւորեց քրիստոնէական աստուածպաշտութեան արարողութիւնը, կրօնաւորների կեանքը, սովորութիւնները, որ պահում էին վանական միաբանութիւնները: Եւ եթէ նրա վերաբերմունքը դէպի այն վարդապետութիւնները, որոնց մասին եկեղեցին դեռ չէր ասել իւր վերջնական վճիռը, երկդիմի էր: Բայց հերետիկունների ու հեթանոսների դէմ նա չէր դադարում մաքառել: յաջողութեամբ մաքառելով մարկիանոսականների ու մանիքեցինների դէմ, Ռաբրուլան յիրաւի համոզեց վերջին բարդիծանականներին վերադառնալու ուղղափառ եկեղեցու գաւիթը:

Ռաբրուլայի (435 թ.) մահից յիտոյ շուտով նրա սխրագործութիւնները զրեց նրա ոգեորուած աշակերտներից մէկը: Այս երկի ձեռագիրը պահում էր Քրիտոնական թանգարանում, և հրատարակեց Overbeck-ը «Ասորոց երկերը» (եր. 159—210). Լաւ յայտնի հաւաքածոյի մէջ: Իւր պատմութեան մէջ Ռաբրուլայի կինսագրութեան հեղինակը մի քանի անդամ քաղուածներ է անում նոր Կտակարանից և ամեն անգամ նրա քաղուածները զարմանալի կերպով համաձայն են գալիս Պեշիտային: Առնեմ, որպէս օրինակ, Lahmā d'suagān'hōn—«նրանց օրական հացը» (Overbeck 168¹). այս հիման վերայ պարզ է, որ Տիրոջ ազօթքի բնագիրը, որ ծանօթ է զրոյին, համեմատ է Պեշիտային, ուր ասուած է «մեր օրական հացը» և ոչ ասորական հին թարգմանութեանը, որ է, ամշտական հացը» որպէս թարգմանութիւն ուս ձեռու դիման ուն էպօնչուու:

Հստ այսմ Ռաբրուլայի ժամանակից սկսած, մանաւանդ նրա յիշատակը յարգողների շրջանում, բոլորովին հաստատուել է Պեշիտայի թարգմանութեամբ նոր Կտակարանը: Նրա բնագիրը կիրարկում են ասորի բոլոր ուղղութեան գրողները, ասորական բոլոր տղանդների ժամերգութեան ժամանակ կարդացւում է այն: Միարնակները յիրաւի բոլորովին էլ գոհ չէին Պեշիտայից և Թոմա Հերակլացին, որ գիտնական միաբնակ էր, և ո. Գրքի իմաստակօրէն տառացի թարգմանութիւն կատարեց, որ համարւում էր

4) Այս տեղը ասում է: «Ազորմութեամբ Աստուծոյ ուղարկւում էր նրանց (այսինքն Ռաբրուլային ու նրա ընկերներին) երեխյեան արեւմոքին նրանց օրական հացը». կենսագրովը օպտուել է Պեշիտայից: Միւս ամրգ օրինակը կարելի է համարել նրա քաղուածը Յովին. 4, 14. Overbeck 197 20.

քննական հեղինակաւորութիւն, և երբեմն գործադրում է այն ժամերգութեան ժամանակ:

Բայց նոյն իսկ միաբնակներն էլ բոլորովին չհրաժարուեցին Պեշտոտայից. նեստորականները անդրդուելի կերպով յարած ֆացին նրան Բաց յայտմանէ, ինչպէս նկատել եմ վերև, և դարի վերջին կէսից մինչև տոպազդութեան գիւտը Պեշտոտայի եղած ձեռագրերից երկար շարքեր վկայութիւն ունենք: Դրանք բոլորն էլ ըստ էութեան մի և նոյն տեսակի բնագիրն ունեն:

Թուա. քարգ. Յուսիկ Արենապ.

Ա. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՐԱԿՆԵՐԸ.

(Գրուած Վերին-Ազուլեցի Ս'ելքոն Փանեանցին).

33.

Թիֆլիզ, 18-ին նոյեմբերի 1870.

Խմ ազնիւ, եղբայրապատիւ բարեկամ,

Չեր յարգելի նամակը ամսուա Յ թուականից հասաւ ինձ իւր ժամանակին, որոյ մէջ յայտնումէք ինձ մի անկարգութեան անցք, որ ես վաղուց գուշակումէի, միտ դնելով այն բանին, որ քաղաքից քաղաք և այն, բանքի ձեռամբ արծաթ հասուցանել, միշտ դժուարին բան է: Դուք մեղաւոր չեք, այլ իմ եղբայրը պարտական էր Չեզ չնորհակալ լինել, որ Դուք աշխատութիւն էիք յանձն առած անելորդ ծափքով արծաթ ուղարկել նմա: Եթէ դա իւր ժամանակին հասած չէ նամակատան սպասաւորի անհօգութեամբ, այդ արդարն ցաւելի է, բայց ոչ, Չեր պատասխանատւութեան ներքոյն ննջենմ ամենին միամիտ լինել Չեր տոկոսիքի հատուցման մասին սկսեալ փոխանակագրի ամսաթուից, իմ եղբայրը չունի համարձակութիւն այլապէս վարուիլ, քան մէ ամենին համած այն է իմ կամքին և խորհրդակցութեանը:

Ամսուա կ թուականից ստացայ պ. Քանանեանից մի նամակ, ինչպէս նա խոստացած էր Չեզ գրել ինձ, նա կրկնած էր ինձ նոյն պայմանքը պրօֆեսսօրական պաշտօնի, որ արդէն յառաջուց յայտնի էին ինձ, յաւելացնելով միայն, որ այդ պայմանքը ժամանակով կը փոխարկուին դէպի լաւագոյնը և առաւել շահաւէտը, և բարեկամաբար խորհրդակցելով ինձ և յուսացուցանելով զիս, որ յանձն առնում այդ պաշտօնը ես արդէն վճռաբար պատասխանեցի նմա, որ ընդունումն նորա առաջարկութիւնը և յանձնումն այս գործի կարգագրութիւնը նորա խոհական բարեկամական հոգաբարձութեանը: